« անունով ծանօթ է. — որ թերեւս Մինաս Թորոսեան վարդապետն ըլլայ. — բայց « Վիեննայի արքունեաց մէջ ճանչցուած ու կայսրէն մեծապէս գովուած անձ մըն է։ « Կարոլոս Զ. զինք « եռանդուն ու հաւատարիմ հպատակ, գեղեցիկ արուեստից ու « փիլիսոփայութեան, ինչպէս նաև աստուածաբանութեան վարդապետ կ'անուանէ. « ու քանի մը տարի ետքը հրատարակուած կայսերական արտօնագրին մէջ Պարո- « նեան (Barun) անունով նշանակուած է »։

Գերյարգելի Հայր իմ ի տէր

... սկսբանէ Ղօննիոսն ըստ ասացելոյն իմոյ և խնդրուածոք իմովք իմիենիս էառ բարեխօս լինիլ, և եղեւ, մինչ Է տարի Օգսէնտ եպիսկ. ոչ կարաց կէտն այն տալեց չինել, և հաստատեալ Ե զօլաթա տան գլոխ տալ տարոց տարի երկրին, որ միայն կամեր զհայս զոլ միաբան ոչ զնելով քանականութիւնն տալեց, այժմ մեծ դժվարութեամբ եղև, այս- ինքն ամառնա(յ)ին ժամանակն. լսելով ես զայս լցեալ մեծաւ ուրախութեամբ պատրաստե- ցայ ի ճանապարհ, զի այս էր մեծ արգելմունք։ Հայք լուեալ զայս զարմացան թէ որպիսի հեշտ բան եղեալ է, և այսչափ տարի յամեցեալ է. սկսեցին քարշել զտեղիս և զազարակս Օլախ եպիսկոպոսի, որ անհամբեր և ի բնութենէ բարկասիրտ չարախօսեաց յայտնի ընդ(դ)էմ Հայոց (և ոչ եղև չարագոյն) ընդդէմ Կայսերական իշխանաց։ Հայք չուտով գրեցին ինձ մնալ աստ, զի և զայս հաստատիցեմ, և իշխանք բարկացեալք գրեցին աստ, ուստի վասն բազում հպարտութեան նորա յափշտակեցին զտեալ առիթ զազարակս, և եւին Հայոց։ Մինչև զայս յաղթեցին հայք, սկսեցին և զայլս պահանջել, այսինքն ոչ կամին պահել և օգնութիւնն տալ կայսերական զինուորաց, ի ժամանակի նեղութեան և պատերազմոյն, որ է անգէտ և անկարելի խնդիր. քանզի ի նմին ժամանակի՝ ոչ եկեղեցիք և ոչ եկեղեցականք ազատ են։ Կարես աստի իմանալ թէ որչափ վիշտ և նեղութիւն քաշեցի. նուաղեցաւ զօրութիւն իմ և մաշեցայ։ Ուստի խնդիր գրեցի իշխանի միոյ կայսերականի, որ զհայս խրատիցէ առնուլ զայսմիկ շնորհս և ոչ երբեք յամեցու- ցանէ զփրիվիլեկումն, քանզի այսմիկ կերպիւ կորուսանիցէ զնա, մինչ երկիրն լուեալ զպարգեւեալ շնորհս Հայոց օր ըստ օրէ ոչ դադարի զանգատ գրել աստ կայսերի, թէ որպէս կարէ և կամի զբոլոր երկիրն ոտնակոխ առնել և զփոքրիկ ազգն բարձր(ա)ցու- ցանել. և զայս խրատեալ նոցա հանգան հայք և լռեցին ի խնդրոյ, և թէ սակաւ ինչ ժամանակ թողեալ իցէին՝ ստուգապէս կորուսանէին զշնորհս. այժմիկ գրեցին հայք, զի առեալ զփրիվիլեկն երթիցեմ ի տուն, բայց աստ մնալոց եմ մինչեւ մեծ պաք։...

Պատրաստական ծառայ

ի Վիէնայ 29 տեքտեմպ 1725 Տէր Մինաս Պարոնեան աստուածաբանութեան վրդպտ.

ԻԹ.

Հետագայ նամակը պատմական տեսակէտով կարևոր կը դատենք, նկատի ունե- նալով նամակագրին անձը՝ որ ոչ միայն կը զբաղեցնէ ցարդ մեր բանասէրները իր շահեկան թղթերով՝ այլ որովհետեւ ինքն իսկ իր բաժինը բերած է մեր ազգային մատենագրութեան մէջ, (տես անոր երկերուն ցանկը ԳԱԼԵՄԿԵԱՐԵԱՆ « Պատմ. Երկու Պատրիարքներու...» էջ 289-32)։ Յովնան Եպս.ի այս թուղթը իր կենսագրութեան մէկ պակաս կէտը պիտի լրացնէ այնու՝ որ երևան կը բերէ իր մօրը մահուան պարա- գաները և թէ անոր ուր թաղուած ըլլալը։